Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ հայցի բավարարմամբ պայմանավորված դատա-կան ծախսերը պետք է կրի Պատասխանող կողմը և հաշվի առնելով պետական տուրքի վճարված լինելը, Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձ-ման 30000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը բավարարել. Երևանի քաղաքապետարանի կողմից «Լիվարդ շին» ՍՊ և «Ա.Ա.Մ.33» ընկերությունների միջև 22.02.2024 թվականին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-24/13» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը ճանաչել անվավեր և որպես հետևանք Երևանի քաղաքապետարանից «Լիվարդ շին» ՍՊ ընկերությանը վերադարձնել 13,530,100.00 00 (տասներեք միլիոն հինգ հարյուր երեսուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամը, որպես գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորից գանձված գումար:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Լիվարդ շին» ՍՊ ընկերության բռնագանձել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am